



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

368.5
Հ-11

աց

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ Հ Յ

ԲՈԼՈՐ ՇՐՋԻՆՔԱԾԻՆՆԵՐԻՆ
(Առ Պիտուղահովագրության)

ԲՈՒԽԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ
ԼՐԻՑԱՐՔՈՒՄԸ ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԽՑՑՈՒՆԻՑ
ՅԵՎ ԱՆԲԵՐՐԻՈՒԽՑՑՈՒՆԻՑ

ՅԵՐԵՎԱՆ 1931

Հասուատվաւմ ե.
Քբնժօղկոմի Ցեզակալ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ № 3

ԲՈԼՈՐ ՇՐՋԻՆԲԱԺԻՆՆԵՐԻՆ
(Աս Փետապահովագրության)

ԲԱԽՍՎԱՆ ՄԾԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԼՈՒՄԱՐԳՈՒՄԸ ԿԱՐԿՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՅԵՎ ԱՆԲԵՐԲԻՌԻ- ԹՅՈՒՆԻՑ

Ընթացիկ 1931 թ. ընթացքում շրջֆինբաժինները և գյուղխորհուրդները կարկտահարության և անբերբիության վնասների լուծարքան գործում պետք և ղեկավարվեն:

1. 1928 թ. հրատ. ընդհանուր կոպարային կուսաններով և 2) սույն շրջտրերականով:

Ա. ԳՅՈՒՂԱՌՈՂՈՒՐԴՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԿՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԴԵԳՐԵԲՈՒՄ.

1. Գյուղխորհուրդները պարտավոր են ձեռք առնել բոլոր միջոցները իրենց շրջանի ապահովագրիրներին իրազեկ գարձնելու ոյն մասին, վոր կարկտահարության ամեն մեկ առանձին դեպքում նրանք պարտավոր են անմիջա-



պես և վոչ ուշ 2 որից Հայտնելու գյուղակարանը բնագավառին, նախազդուշացնելով, վոր բերքի հավաքելուց հետո Ֆ. Փ. Կ. վոչ մի Հայտարարություն չի ընդունում և վնասի համար պատասխանատու չե: (§ 32 կանոնների):

2. Գյուղխորհուրդները պետք ե բացառը բեն բնակչությանը, վոր կանոնների հիման վրա Թինժդղոկոմատն իրավունք ունի մերժելու ազատության վարձարարությունը բարդ գիտավորակ սխալ արդիած անդեկությունների համար:

3. Գյուղխորհուրդները պետք ե բացառը բեն գյուղացիներին, վոր բոլոր վեճերը թև տարածությ. վերաբերյալ և թե վնասի տոկոսի մասին պետք ե վորոշվեն տեղում ակտով կազմելու ժամանակ Թինժդղոկոմատի ներկայացուցչի կողմից, Հայագայում վոչ մի գեպօքում չեն բնունվի այդ Հարցի վերաբերյալ բողոքներ:

4. Գյուղխորհուրդները վոչ ուշ քան յերեք որից ամեն մեկ տեղի ունեցուծ կարկտահարության մասին Հայտնում են գրավոր շրջինքաժնին:

5. Գյուղխորհուրդների, քաղաքացիների և կոլտնտեսությունների ներկայացուցիչների գործակցությամբ, գյուղացիական փոխունության կոմիտենի և այլ Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, ամեն մեկ կարկտահարության դեպքում կազմում են վնասված ցանքսերի

4

ցացակը Թինժդղոկոմատի (Պետապի) համապատասխան բլանկի վրա, ցույց տալով նըսնց ազգանուններն անունները և Հայրանունները, վնասված տարածության չափն առանձին-ունանձին ամեն մեկ մշակույթի վերաբերմամբ, կարկտահարությունից առաջ յեկած վնասի մուտքոր տոկոսը նույնական առանձին-առանձին ամեն մեկ մշակույթի համար (կցումն № 1): Ծննեսության հերթական համարը պետք ե ցույց տալ այն, ինչ վոր նշված ե վեճաբահատուցման ցացակում կամ ծանուցություններ:

6. Այլպիսի կարգով պատրաստված կարկտահարությունից վնասված գյուղացիության ցուցակը գյուղխորհուրդները, մինչ այլպիսին շրջինքաժնին ուղարկելը, Յակոբիա ընթացքում կախում են մի աչքի ընկնող տեղում, վորպեսզի ազատություններն ստոգեն արդյոք բաց չի՝ թողնված իրենց ցանքսերը և բացի գրանից Հայագիրում են գյուղհամայնքի ընդհանուր ժողով, վորտեղ կարգարով կարկտահարված տնտեսությունների ցուցակը, ուղղում են սխալները և ավելացնում բաց թողնվածները:

7. Չորս որից հետո կարկտահարությունից վնասված ցանքսերի ցուցակը գյուղխորհուրդները ներկայացնում են շրջինքաժներին:

8. Լուծարքողների (գյուղատնտես ու տեսուչ) գալուն գյուղխորհուրդները հրավիրում

5

Են վնասված ապահովագիրների ընդհանությունով, վորտեղ ընտրվում է հատուկ հանձնաժողով, կամ լիազորներ, վորոնք պետք է մասնակցեն վնասված տարածության վնասի առկասի վորոշման գործին։ Գյուղխորհրդի նախագտահի մասնակցությունը այդ հանձնաժողովում պարագաներ են։

9. Գյուղխորհրդականները պետք է համայնքի ժողովում հայտնեն գյուղացիներին, վորոնչների վնասի վերջնական վորոշումն արգելվում է վնասված շանքակրում արածացնել անառաններ և առհասարակ այնպիսի գործողություններ, վորոնք կարող են վնասի տոկոս ամելացնել։

10. Գյուղխորհրդականները պետք է բոլոր միջոցները ձեռք առնեն, վոր վնասված տարածությունները ցուցի արվեն ճիշտ քոլոր պատասխանագությունն ընկնում է գյուղխորհրդականների վրա։

Բ. ՇՐՋԻՆՔԱԺԻՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

11. Շրջֆինքաժինը պարտավոր է մասակարել իր արձանի գյուղխորհրդականներին համապատասխան քանակով ցուցակի բանկներ, նույնպես և խիստ հսկողություն ունենալ, վորպեսզի կանոնավոր ու ժամանակին կազմվեն ու ենթայացվեն կարկտահարությունից և ամբերբիությունից վնասված ապահովագիրների ցուցակներ։

12. Շրջֆինքաժինների վարիչները, կամ ապահուուչները, գյուղխորհրդականներից ստանալով տեղեկություն կարկտահարության մասին, անմիջապես ժամանում են կարկտահարության վայրը, պարզելու վնասված տարածությունը և մոտավորապես վնասի ընդհանությունը մինչողկոմատին հայտնելու համար և հրահանգում են գյուղխորհրդականներին նրա սելիքի մասին։

13. Գյուղխորհրդականներից ստանալով կարկտահարությունից վնասված անձանց ցուցակները, Փինքաժինը այդպիսին համարակալում է հաջորդաբար ըստ կարգի։

14. Ամեն տասը որը մեկ՝ 1, 11 և 21-ին շրջֆինքաժինը կարկտահարության կամ անբերդիության մասին տեղեկություն է ուղարկում Ֆինողկոմատին (ըստ որինակի, տես կցումն № 2) ձեւ № 27 բլանկի վրա։

15. Այն գեպքերում, յերբ կարկտահարությունից վնասված տարածությունը 300 հեկտարից ավելի յէ, շրջֆինքաժինը տեղեկացնում է Ֆինողկոմատին հեռագրով մոտավորապես հետեւյալ բոլանգակությամբ։

«Ֆինողկոմատին. Հունիսի 20-ին Յերանուում կարկտահարված է 450 հեկտար ցորեն»։

16. Գյուղխորհրդականներից ստացված կարկտահարված մշակույթների ցուցակների հիման վրա շրջֆինքաժինը ակտի բլանկ № 21-ի վրա կազմում է ցուցակ ամեն 1 տուժողի վերաբերյալ, լրացնելով 1,2,3,4,5,6 սյունյակ-

ները, այսինքն՝ համարներն ըստ կարդի, ուն-
դիստրացիոն ցուցակի №-ը, ապահովագրի ող-
դանունը, անունը և հայրանունը, կարկտա-
հարված մշակույթների տեսակը և ապահովա-
դարված տարածության չափն անպայման հեկ-
տարներով կամ դեսյատիններով, ցույց չառ-
լով կարկտահարված տարածությունը և առ-
կուները:

Այդ յերեք սյունյակները (7—9) ըստ ակ-
տի լրացվում են լուծարքողի կողմից տեղում
վնասը վորոշելու ժամանակ, անպայման վր-
եասի տարածությունը նշելով դեսյատիններով
կամ հեկտարներով (կցում № 3):

17. Այդպիսի կարգով պատրաստված լու-
ծարքման ակտերի բլանիներով ապահովուչը
դյուզատնտեսի հետ միասին ժամանում են
կարկտահարության վայրը վնասների լուծարք
ման համար:

Ծանօթություն. — Վնասների լուծարքումը
ըրջանային դյուզատնտեսի կողմից կատարելու
դեպքում, ապտեսչի ներկայությունը պարա-
գիր և և առանց Փինքաժնի ներկայացուցչի լուծար-
քը չի համարվի որինավոր:

18. Գյուղատնտեսի բացակայության դեպ-
քում ըրջֆինքաժնը հեռագրում է Ֆենժողկո-
մատին:

ՅԵԹԵ վնասված տարածությունը 50 հեկ-
տարից ավել չե, ապա ըրջֆինքաժնը վնասը
լուծարքում է ինքնուրույն, բացի հատուկ մը-

շակույթներից, վորոնց լուծարքը կատարվում
է դյուզատնտեսի մասնակցությամբ:

19. Ինչպես գյուղատնտեսը, նույնպես և
ապահովուչը վնասների լուծարքման ժամանակ
պարզում են հետեւյալը.

ա) Կարկտից վնասված մշակույթի ճիշա-
չուիր և լուծարքային ակտի 7-րդ սյունյակը
և բ) վորոշում են ըստ տնտեսությունների և
ըստ առանձին մշակույթների վնասի տոկոսը
համաձայն հրահանդի, վորի համար լուծար-
քողները (ապահովուչը կամ գյուղատնտեսը)
հանձնաժողովի հետ միասին պետք է անցնեն
ամեն մեկ արտ, առանձնապես տեղում վորո-
շեն կարկտից վնասված մշակույթի տոկոսնե-
րը:

Ծանօթություն. — ՅԵԹԵ վնասների լուծարք-
ման և կարկտից առաջ յեկած ավերածության տո-
կոսի վորոշման ընթացքում պարզվում է, վոր
տվյալ տնտեսությունը կամ տվյալ մշակույթը վե-
նամակած չե, ապա ի գյուղաց տվյալ տնտեսության
կամ մշակույթի գրվում և «չի վնասված»:

20. Ընդհանուր վնասի տոկոսներից դուրս
Հանել այլ պատահարներից վնասված 8-րդ
սյունյակում նշված տվյալները:

Որինակ՝ ցորենը փչացել և 30 տոկ. յե-
րաշախ և կարկտահարությունից՝ 40 տոկոս.
ընդհանուր 70 տոկ. (տես ակտի 8-րդ և 9-րդ
սյունյակ):

9-րդ սյունյակում հարկավոր և նշել, վոր
թե 70 տոկոս, այլ 40 տոկ.:

Ծանօթություն. — Այն դեպքում, յերբ լու-

ծարքութե ինը չի կարողանում պարզել բերքի վը-
նափ այլ պատճառները, բացի կարկտահարու-
թյունից, նա պիտի գիմի ուրիշ սրգանների և
գերցնի վնասի տոկոսները:

21. Այդպիսի կարգով կազմված ակտն
ստորագրում են՝

ա) Հանձնաժողովի անդամները, բ) գյուղ-
խորհրդի ներկայացուցիչը, գ) գիտակ անձնու-
վորությունը (գյուղատնտեսը) և դ) ապտե-
սուչը:

Դանոթություն. — Բոլոր ակտերի վրա հար-
կավոր և նշել, զոր ավյալ ակտը վերջնական և ե
հետպայում վոչ մի դիմում կամ բողոք չի ըն-
դունվի:

22. Ակտը կազմող (գյուղատնտեսը կամ
ապտեսուչը) պետք է կարկտահարության
ակտի բոլոր հարցերին պատասխանի ճիշտ և
վորոշակի:

23. Իբրև ընդհանուր կանոն, կարկտահա-
րության լուծարքումը կատարվում է բերքի
համարելուց յերկու շաբաթ առաջ և վոչ ուշ
բերքի համարելուց:

Այդ պատճառով ել վնասի վերջնական տո-
կոսը վորոշում է այն ժամանակ, յերբ բեր-
քի արդյունքը վերջնականապես պարզվում է:
որինակ՝ յենթադրենք՝ մայիս ամսում կարկտ-
ահարփած է ցորենի դաշտը և լուծարքողի
կարծիքով վնասը 50 տոկոս է: Այդպիսի դեպ-
քում ակտը կազմել և անմիջապես վնասը բա-
վարարել չի կարելի, այլ հարկավոր և սպառել,

10

մինչև վոր վերջնականապես պարզվի բերքի
արդյունքը, և վնասի տոկոսը վորոշել վոչ ուշ,
քանի յերկու շաբաթ մինչ այդ ցորենի բերքը
հավաքելը:

24. Ակտը ակտում կազմելուց հետո, այ-
սինքն՝ ձև № 21-ի յերկրորդ յերեսի 1, 2, 3,
4, 5, 6, 7, 8, 9 այլույակները լրացնելուց հե-
տո ապահովությունը ապահովում է վնասի գումարը
(ապահովագրական վարձատրությունը,
այլույակներ 10, 11):

Դանոթություն. — Ապահովագրական վար-
ձատրությունները դուրս բերելու ժամանակ ոն-
համաժեղության տարում ցուցակագրու-
թած տարածությունները համեմտուել կարկտա-
հարփած տարածությունների հետ և յեթե կարպ-
վի, վոր վնասված տարածության չափը ավելի քիչ
է, քան ցուցակագրվածը, այդ դեպքում վնասի
պամարը դուրս բերել համաձայն կարկտահարփած
տարածության հիման վրա, իսկ յեթե վնասված
տարածության չափը ավելի շատ կլինի, քան թե
ցուցակագրվածը, այդ դեպքում վնասի դումար-
ները դուրս բերել երբեմ այլույակում ցույց տված
տարածությունով:

Բացի դրանից կարող է պատահել նաև հետ-
յալք, վոր միենույն սննդեռնության բույսերը ինեն
կարկտահարփած զանազան սառնաներում: Նույն
գասին պատեհանող կուլտուրաները և զանազան տու-
կոսներով, այդ դեպքում անհրաժեշտ է դուրս բե-
րել վնասի միջին տոկոսը:

Ապահովագրական վարձատրությունները հար-

11

կազոր և հաշվել 1931 թ. նորմաներով,
վորի մասին ուղարկված և յեղել ձեզ Հայաստանի
№ 110 շրջաբերականը 27-ին հուլիսի, 1930 թվի
(առ կցում՝ № 4):

25. Ապահովագրված մշակույթների տա-
րածությունը (ըստ անսակների՝ 6 սյունյակը)
վնասների լուծարքման ժամանակ պետք է ըն-
դունել վոչ այլի այն տարածությունից, վորը
ցուցակագրված է ընթացիկ (ըստ լուծարքման
ժամանակի) սրացույցային տարում, իսկ յեթե
տվյալ տարում ցուցակագրություն չի յեղել,
այդ դեպքում հաշվի յետ առնվում իրական ցան-
քի վնասված տարածությունը:

26. Յեթե կապարզվի, վոր մի տնտեսու-
թյուն վերցրել է կիսովի, կամ ընդհակառակը
և մշակված տարածությունը ցուցակագրու-
թյան ժամանակ հաշվի յետ առնված կիսովի
տվյալ կամ վերցնողի վրա, այդ դեպքում ակ-
տի 2-րդ սյունյակում ցույց է տրվում ձև № 1
կոպարային ցուցակի տնտեսության համարը,
3-րդ սյունյակում ցուցակագրված տարածու-
թյունը և ազատ սյունյակում դրվում է «կիսո-
վի» ու վորպիսիների համար կազմվում է հա-
տուկ արձանագրություն և այդպիսիները կը ց-
վում են կարկտահարության ակտին:

27. Այն դեպքում, յերբ միենույն բուսա-
կան մշակույթները կարկտահարվում են յեր-
եղու կամ մի քանի անգամ, այդպիսի դեպքում
պետք է վորոշեն մեկ ընդհանուր տոկոսը:

Որինակ՝ Գասպարյան Կարապետի ցորենը

կարկտահարվել և ողոստոսի 30-ին, գյուղա-
տնտեսաբ վնասի չափը վորոշել է 40 տոկ., սեպ-
տեմբերի 5-ին նորից և կարկուտ գալիս և գյու-
ղատնտեսաբ հանձնաժողովի հետ միասին վորո-
շում են, վոր Գասպարյան Կարապետի նույն
ցորենը վնասվել է ընդհամենը 50 տոկոս, ու-
րեմն վնասը պետք է հաշվել ընդհամենը 50 տո-
կոս, այլ վոչ թե դումարել 40 տոկոս և 50 տո-
կոս:

28. Պազատու (այդիների), տնկարանների
ապահովագրության վերաբերյալ Ֆինժողկո-
մատի պատասխանատվությունն սկսում է
ծաղկեաներմարանի գոյանալու որվանից, հե-
տեւվագես այն կարկտահարության դեպքերի
համար, վորոնք տեղի յեն ունեցել մինչեւ
ծաղկման շրջանը, Ֆինժողկոմատը պատաս-
խանատու չե:

29. Ծխախոտը, խաղողը և յոնջան հավաք-
վում են աստիճանաբար, ըստ նրանց տեխնի-
կական հասունության, այդ պատճառով ել
վնասի հաշվարկը կատարելու ժամանակ պետք
է նկատի ունենալ արժեքի աստիճանական նը-
գագումը և յելնել բերքի համապատասխան
կերպով նվազած չափից:

Ծանոթություն. — Ծխախոտը և խաղողը լու-
ծարքում են համաձայն հատուկ հրահանդի:

30. Նախքան կարկտահարության վնասը
վորոշելը, հարկավոր է ստուգել՝ ինչքան կաք-

Յենար բերքը, յեթե չկարկտահարվեր, վորով-
հետև Ֆինժողկոմատի վնասը չպետք է բարձր
լինի վոչ բերքի խոկական արժեքից և վոչ ել
ապահովագումարից:

31. Աշխատանքը թեթեվացնելու համար
բերգում են վնասի հաշվելու հետեւյալ որի-
նակները:

Յենթաղրենք, վոր գյուղացի Խաչառյա-
նը 1931 որացույցային տարում ապահովա-
րքել է 2, 5 դեսյատին առաջին դասի բույսեր,
իսկ կարկտահարվել է 1, 2 դես. ցորեն 40
տոկոսի, և գարի՝ 0,8 դես. 30 տոկոսի:
Այդ մշակույթների ամեն մեկ դեսյատինը կո-
պարացին կարգով ապահովագրված է 40 ռ.
Հետեւվարար, յեթե այդ վնասը լիներ 100 տո-
կոս, ապա ապահովագրողը կատանար՝

1. 1, 2 դես. ցորենի համար 48 ռուբլի,
2. 0,8 դես. գարու համար 32 ռուբլի:

Բայց վորովհետև ցորենը վնասված է 40
տոկոս, իսկ գարին 30 տոկոս, ապա վնասը
կազմում է՝

$$\text{ա. Ցորեն} \quad \frac{48 \times 40}{100} = 19 \text{ ռ. } 20 \text{ կոտ.}$$

$$\text{բ. Գարի} \quad \frac{32 \times 30}{100} = 9 \text{ ռ. } 60 \text{ կոտ.}$$

Յենթաղրենք, վոր գյուղացի Վարդանյա-
նը 1931 որացույցային տարում ապահո-
վարքել է 2,00 դեսյատ. առաջին դասի բույ-
սեր, իսկ կարկտահարվել է ցորեն 1,00 դես.

80 տոկոսով, ես ցորեն 1,50 դես. 60 տոկոսով
և գարի 0,50 դես. 20 տոկոսով:

Նկատի անհնարին այն հանգամանքը,
վոր ապահովագրվել է 2,00 դես., բայց կարկո-
տահարվել է 3,00 դես., այդ գեղքում անհրա-
ժեշտ է գուրս բերել միջին տոկոսը և վնասը
բավարարել 2,00 դես. ապահովագրված տա-
րածության համար:

$$\begin{array}{rcl} \text{Այն եւ} & 1,50 \times 60 = 90,00 & 180 : 3 = 60 \\ & 1,00 \times 80 = 80,00 & \text{միջին տոկոսը} = 80 \\ & 0,50 \times 20 = 10,00 & \\ \text{Ընդամենը} & 3,00 & = 180,00 \end{array}$$

Միջին տոկոսը գուրս բերելու ժամանակ
հարկավոր է կարկտահարված տարածություն-
ներն առանձին բաղմապատկել վնասված տո-
կասի վրա և ստացված գումարները բաժանել
ոմքովզ կարկտահարված տարածության վրա:

Եանորություն — վնասը հաշվելիս ապահ-
ուաները (լուծարքողները) պետք է ձեռք տանին
բոլոր միջոցները, վորովեզի սխաները չանեն, աչ-
քի առաջ ունենալով, վոր սխաների և ավելի գու-
մարների տալու գեղքում, լուծարքողը պատա-
խանառու յէ անձամբ և ավելի վճարելու գեղ-
քում արդպիսի գումարները կդրվեն նրա անձնա-
կան հաշվին:

32. Կարկտահարությունից վնասված լու-
սական մշակույթների համար չի վճարվում
վնասները հետեւյալ գեղքերում՝

1. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

ա) Յեթե հացահատիկային մշակույթների վնասներն ավելի չեն վնասված ցանքսի տարածության ազահովագրական գումարի 10 առ կոսից, կամ ամեն մեկ տնտեսության յերեք (3 ո.) ոռորդուց:

բ) Յեթե հատուկ բուսական մշակույթների վնասը ավելի չեն վնասված տարածության ազահովագրական գումարի 5 տոկոսից, կամ յերեք (3 ո.) ոռորդ ամեն մեկ տնտեսության, յերբ ազահովագրական գումարը ավել չեն 100 ոռորդուց: 5 ոռորդի (հինգ), յերբ ազահովագրական գումարը կազմում է 100-ից մինչև 500 ոռորդի: 10 ոռորդի (տասը ոռորդի), յերբ ազահովագրումարը 500 ոռորդուց բարձր է:

2. ՀԱՏ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ

ա) Յեթե հացահատիկային մշակույթների վնասն ավել չեն հինգ ոռորդուց և յեթե վնասված ցանքսի տարածությունն ավել չեն 100 հեկտարից: 10 ոռորդի, յեթե վնասված տարածությունը 100 հեկտարից մինչև 500 հեկտար է: 15 ոռորդի, յեթե վնասված տարածությունը 500 հեկտարից ավել է:

բ) Բայց տեխնիկական կուլտուրաների վնասը չի վճարվում, յեթե 10 ոռորդուց ավելի չեն յեթե ցանքսի տարածությունը 100 հեկտարից ավել չեն: 20 ոռորդի, յեթե ցանքսի տարածությունը 100-ից մինչև 500 հեկտար է.

30 ոռորդի, յեթե ցանքսի տարածությունը 500 հեկտարից ավել է:

3. ՀԱՏ ԿՈԼԽՈԶՆԵՐԻ ՅԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Եյն վնասները, վորոնք առաջացել են այնպիսի գաշտերում, վորոնեղ կարկուտ չէ յեղել, բայց կարկուտի հետեւվանքով առաջացել է սելավ և սելավից կուտուրաները վնասվել են (կանոնների § 1):

2. Յերբ մինչև ակտը կազմելը և վնասի վորշելը, բերքը հավաքվում է (քաղվում է) (կանոնների § 17):

3. Յեթե վնասված տարածության չափը 0,02 հեկտարից պակաս է:

4. Յեթե վնասի չափը 5 տոկոսից պակաս է:

5. Յեթե ազահովագրողը ազահովագրական վարձատրությունը ստանալու պահանջը ներկայացնում է յերկու տարուց հետո:

6. Յեթե ազահովագրողը յերկու որվանթացքում չի հայտնել ազահովագրական դեպքի մասին:

7. Յեթե ազահովագրողը միջոցներ ձեռք չի տաել վնասված բուսական մշակույթները փրկելու (կանոնների § 34):

8. Յեթե դիտավորյալ գործողություններով ազահովագրողը ավելացնում է վնասի չափը:



**ԲՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՎՆԱՄՆԵՐԻ
ՀՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԴԸ ԱՆԲԵՐԻ ՈՒԹՑՈՒՆԻՑ**

33. Համաձայն Աշխատանքի և պաշտպահության Խորհրդի վորոշման Հայտատանառմ 1931 թ. ապահովագրվում են պարտադիր կողարային կարգով անբերրիությունից հետեւյալ բուսական մշակույթները՝ բամբակը, առան, կենամիր, գենազերշակը, քունջութը, արտիսիսը:

34. Ապահովագրական նորմաները անբերրիությունից մեկ հեկտարի համար սահմանված են՝

Մշակույթների անունները	Կոլխոզների համար		Անհատական անահ- ությունների համար	
	Քաշը գրավ փթով	Նորման սուր.	Քաշը գրավ փթով	Նորման սուր.
1. Բամբակ	36	180	25	100
2. Սոյա	35	120	20	80
3. Կենամիր	180	80	120	59
	ցենտ.	սուր.	ցենտ.	սուր.
4. Գենազերշակ	4	60	3	45
5. Քունջութ	4	110	3	82—50
6. Արտիսիս	5	375	4	300
7. Սոյա	4	80	8	60

35. Յեթև վերոհիշյալ բուսական մշակույթների բերքը պահանջեղավոր կարգությունում

հեշտած չափերից (քանակից), այլ գեպքում։ Ֆինժողկոմատը վճարում է ցանքատեղերին պակասորդի արժեկան նշված կայտն գներով։

36. Վերոհիշյալ բուսական մշակույթները անբերրիությունից ապահովագրելու մասին Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի վորոշման հիման վրա ֆինժողկոմատը չի հատուցում ապահովագրական վնասները, յեթե տուժած բուսական մշակույթների ցանքաերի ցրիլ կամ մասնակի անբերրիությունը առաջ է յեկել նրանից, վոր ցանքարարը չի կատարել ավագանությունը կամարի համար սպահանգած աղբումինից մումը։

37. Վերոհիշյալ կուլտուրաների վնասը անբերրիությունից վորոշելու վերաբերյալ բոյոր լուծարքային գործողությունները կատարվում են նույն կարգով, ինչպես կարկտահարության վնասների վորոշման ժամանակ։ Սակայն անբերրիությունից տուաջացած վնասի գեպքում առաջուց պիտի կատարվի տուժած բուսական մշակույթների գաշտերում նախնական զննումը և ապա վնասների վերջնական գնահատումը։

38. Վերոհիշյալ բուսական մշակույթները չակի, քունջութի և արախիսի գաշտերի նախնական զննումը կատարվում է անհապաղ տուժած ապահովագրվողներից դիմումներ (Հայցեր) ստանալուն պես։ Նախնական զննումը անհրաժեշտ է, վորակեսզի հաշվի առնվի արժմատի վրա մնացած բուսական մշակույթների

դրությունը և դրա հետ միասին նախորոք վորշվի, թե այդ գաշտերում անրերիությունը սահմանված նորմաներից ցածր կլինի, թե վոչ: Նախնական զննումը տարածվում է վոչ միայն առանձին գաշտերի վրա, այլև տվյալ վայրի (սառնայի) բոլոր նման տեսակ ցանքսերի վրա, վորովհետև սովորաբար անրերիությունը (չբերությունը) ընդգրկում է համեմատաբար ժեծ տարածություն և շատ քիչ է պատահում, յերբ նա սահմանափակվում վորոնե մի քանի սառնաձին տնտեսություններով:

39. Նախնական քննության ժամանակ սահմանվում է՝

ա) Վնասված բուսական մշակույթի տարածությունը յուրաքանչյուրի համար առանձին, ըստ բուսական մշակույթների և ըստ տնտեսությունների:

բ) Բերքի չբերքության չափը մոտավորապես:

40. Բուսական մշակույթների չբերքության վերջնական վնասի չափը վորոշելու համար կուղարկվի հատուկ տեխնիկական հրահանդ:

41. Անրերիությունից ապահովագրված վնասների չափը վորոշելու համար կազմվում են հատուկ ակտեր ձև № 21 ա. բլանկի վրա նույն կարգով, ինչ կարգով կազմվում են կարկտահարության ակտերը:

42. Աշխատանքը թեթեվացնելու տեսակետից և դեկավարության համար սրան կցվում

են ակտի և հաշվարկի որինակները, նույնպես և պատրաստի աղյուսակ՝ կարկտահարության վնասի տոկոսների և տարածության գումարը վորոշելիս (կցում № 5):

43. Լուծարքողներին չի թույլատրվում առանց շրջինբաժնի հաստատության բարգարակել կարկտահարության մի վորհե վնաս, անկախ գումարի չափից:

44. Ապահովագրական վարձատրության վճարումները, կատարվում են անպայման այն գյուղերում, վորտեղ տեղի յե ունեցել կարկտահարությունը, կամ անրերիությունը:

Ապահովագրական վարձատրության բժանելու ժամանակ գյուղացու անդրագիտության պատճառով, սահրազրում են ի տեղի ուրիշ գյուղացիներ, բայց վոչ թե հանձնաժողովի կազմի մեջ մտնող ընկերներից, կամ թե գյուղխորհրդի նախագահը: Ստորագրողը իր ազգանունը պետք է պարզ գրի:

45. Ապահովագրական վարձատրությունը բաժանելիս Փինբաժնի վարիչը կամ ապահուուչը, գյուղխորհրդի հետ միասին, կազմում են մի հատուկ հանձնաժողով, վորի ներկայությամբ կատարվում են ապահովագրական վարձատրության վճարումները վորք և վավերացնում ե ստացողների ստորագրությունը:

46. Ապահովագրական վարձատրության բաժանելուց հետո հանձնաժողովը, վորտեղ

մտնում ենաև Փինքաժնի Ներկայացուցիչը,
ակտի վերջում կազմում եմի հատուկ արձա-
նադրություն, վորակեղ նշվում են տրված վար-
ձատության ընդհանուր գումարը և ամսա-
թիվը, նշելով բառերով և թվանշաններով
բաժանված գումարների չափը:

47. Հանձնաժողովների ստորագրություն-
ները վավերացվում են գյուղխորհրդի նախա-
դահի կողմից, դնելով գյուղխորհրդի կնիքը:

Բոլոր ակտերը ստորագրում են ֆինժողկո-
մատի տեսչի կողմից:

48. Վնասները լուծարքվում են չըջՓին-
քաժնի և գործկոմի ապարատի միջոցով և վոչ
մի առանձին վարձատրություն չի տրվում:

49. Շրջանային գյուղատնտեսները և մաս-
նագետներն իրենց գործուղման ընթացքում
կարկառարության վնասների լուծարքման
համար վոչ մի վարձատրություն չեն ստա-
նում, վորովհետեւ դա մտնում է նրանց անմի-
ջական պարտականությունների մեջ և նրանք
իրավունք չունեն հրաժարվելու այդ աշխա-
տանքներից:

50. Կուլակների վճասների չվճարման մա-
սին.

ա) Համառարած կուլեկտիվացման չանց-
կացնվող վայրերում կուլակային տնտեսու-
թյուններին չի վճարվում ապահովագրական
վարձատրությունը հետեւյալ դեպքերում
(բացի սույն չըջաբերականի 32-րդ կետում
հիշված դեպքերից):

1. Յերբ ապահովագրական դեպքի մոմեն-
տին կուլակի վրա հաշվում եւ հւտնույթ:

2. Յերբ հայտնաբերվում է, վոր հաշվառ-
ման ժամանակ կուլակը թագցրել է ապահովա-
գրական որյեկտա:

3. Յերբ նա բուսական մշակույթների վե-
րաբերյալ չի կատարել սահմանված ագրոմի-
նիմումը և այլն. մնացած դեպքերում ապահո-
վագրական վարձատրությունը կարելի յեւ վը-
ճարել միմիայն շրջգործկոմի հատուկ թույլ-
տվությունը, վորին իրավունք և վերապահ-
վում առանձին դեպքերում թույլատրել բավո-
րաբելու, բացի վերոհիշյալներից:

Կուլակներին ապահովագրական վարձա-
տրությունը վճարելու դեպքում պետք է պա-
հանել պետական, կոոպերատիվ և հասարակական
կազմակերպությունների կողմից պահանջված
բոլոր տեսակի գումարները:

բ) Համառարած կուլեկտիվացման շրջա-
նում:

1. Կուլակային տնտեսություններին չի
վճարվում բոլոր տեսակի ապահովագրական
վնասները հսմատաբած կոլեկտիվացման ըր-
ջանում:

2. Այն դեպքում, յերբ ապահովագրական
վարձատրությունը յենթակա յեւ բավարա-
ժան, այդպիսիք վճարվում են կուլակներու-
թյուններին կուլակների համար գոյություն
ունեցող նորմաներով:

3. Ապահովագրական վարձատրությունը

44. 229

վճարվում և կոլխոզին միայն այն դեպքում՝
յերբ կուլակային տնտեսության լուծարքե-
լու ինդեքը վորոշված և յեղել մինչև կարկտա-
հարությունը և գույքի հանձնումը կոլտնտե-
սության, հակառակ դեպքում վնասը չի վը-
ճարվում և այդ գումարը մնում է պետական
դրամարկղում:

4. Կոլտնտեսություններին վնասը վճարե-
լիս վնասի գումարից պահպամ են ապահովա-
վճարները, վարոնք մուծված չեն յեղել կուլտ-
կել կողմից, բարդելով այդ գումարի մրա կու-
լակների համար սահմանված չափով տույժը:

Հիե՞ք. — Անգրագետապի № № 158, 159,
161, 276 և 302 շրջաբերականները:

Ֆինժողկոմատի հարկման և միջոցների ներ-
գրավման սեկտարի գեկավար՝

ԴՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

Պատասխանառն Արարարոց՝ ՍԱՐԳՍՅԱՆ



«Ազգային գրադարան



NL0213866

Դպուհ. 6380 (Բ)

24

Դատվ. 1899,

Տիրամ. 1.200